ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

ԱՌԿՏՈՒՐ ՍՊԸ-Ն ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-24/71 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի		
	ֆիրմային անվանումը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
1	Առկտուր ՍՊԸ	Առկտուր ՍՊԸ	Կահույքի չափերն են 2040մմx1000մմx250մմ: Կահույքը իրենից ներկայացնում է հագուստի համար կախիչ՝ 9 տեղանոց, մետաղական կախիչներով, պատից ամրացվող: Այն պետք է պատրաստված լինի 18մմ հաստությամբ լամինացված ՓՏՍ-ից, եզրերը պետք է շրջափակվեն 1-2մմ հաստության պլաստիկե եզրակալերով (PVC): Կախիչը պետք է բաղկացած լինի ուղղահայաց և հորիզոնական լամինացված ՓՏՍ-ներից, որոնք պետք է ունենան համապատասխանաբար 1000x120x18մմ և 2040x120x18մմ չափեր /տես գծագիր էջ-1/: Կախիչը գլխավերևում պետք է ունենա հորիզոնական դարակ, որը պետք է պատրաստված լինի 2040x250x18մմ չափի լամինացված ՓՏՍ-ից: Հորիզոնական դարակի տակ անհրաժեշտ է նախատեսել առնվազն 3 դարակակիր՝ ամրության ապահովման համար: Մետաղական կախիչների միջև առանցքային հեռավորությունը պետք է լինի 240մմ: Մետաղական կախիչները պետք է պատրաստված լինեն Փ6մմ տրամագծով հոծ /առանց դատարկությունների/ չժանգոտվող պողպատից AISI 304 /կամ համարժեք (համաձայնեցնել Պատվիրատուի հետ)/, որոնց

			գլխիկներին պետք է եռակցված լինեն չժանգոտվող պողպատից/կամ համարժեք (համաձայնեցնել Պատվիրատուի հետ)/ հոծ/առանց դատարկությունների/ գնդիկային փակիչներ՝ Φ10մմ տրամագծով: Կախիչն իր գունային երանգներով պետք է համապատասխանի դպրոցի դասասենյակների գույքին: Կախիչի համար օգտագործվող նյութերը պետք է լինեն էկոլոգիապես մաքուր: Կախիչի բոլոր մասերի միացումները պետք է իրականացվեն երաշխավորված, թաքնված ձգանների միջոցով և առնվազն ապահովեն կից գծագրում ներկայացված /տես գծագիր էջ-2/ հատվածքի չափերի ամրությունը: Նմուշը /նկարը/ կցվում է: Նշված ապրանքի համար երաշխիքային ժամկետ սահմանել 365 օր՝ հաշված Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից, երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ եկած թերությունները Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում պետք է շտկել տեղում /դետալների փոխարինում/ կամ փոխարինել նորով: Չափաբաժնում նշված ապրանքների չափսերի մեջ հնարավոր թույլատրելի շեղումը ±3%: Նշված ապրանքները պետք է լինեն նոր՝ չօգտագործված: Ապրանքները պետք է Մատակարարն իր միջոցների հաշվին մոնտաժի՝ տեղադրի մատակարարման վայրում՝ համաձայնեցնելով պատվիրատուի հետ: Տեղափոխումը, բեռնաթափումը, տեղադրումը և հավաքումը՝ ըստ հասցեների իրականացվում է Մատակարարի կողմից: Կախիչները պատին ամրացնելու համար պատին ամրացվում են պտուտակ/դյուբելներ /տես գծագիր էջ-1/, որոնք նախատեսված են առնվազն 45 կգ ծանրություն պահելու համար: Մինչև մատակարարումը ներկայացված ապրանքի նմուշները համաձայնեցնել պատվիրատուի հետ: Մատակարարման օրը համաձայնեցնել պատվիրատուի հետ: Պայմանագրի կատարման փուլում չափաբաժնով ձեռքբերվող ապրանքների պատրաստման ընթացքում օգտագործվող հիմնական նյութերի համար պարտադիր է ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատի առկայությունը

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ԱՌԿՏՈՒՐ ՍՊԸ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-24/71 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар		
	фирменное наименование	наименование производителя	технические характеристики
1			